«ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

0010 Երևան, Տիգրան Մեծի 4
Հեռ. 52-01-28, 54-44-41
Էլ. փոստ pashtonakan@arlis.am

ԳԱԿ-102 «18» նոյեմբեր 2014թ.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ ԿՆՔԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ
ԸՍՏ ՑԱՆԿԻ

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Պաշտոնական տեղեկագիր» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և նշված ծածկագրով շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «ՊՏ-ՇՀԱՊՁԲ-11/8-Ա»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Տիգրան Մեծի 4, 2-րդ հարկ հասցեով, մինչև 2014թ. նոյեմբերի 28-ը, ժամը 14^{00}-ն:

Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է՝ Ս. Ղազարյան:

Հայտերը կբացվեն «Պաշտոնական տեղեկագիր» փակ բաժնետիրական ընկերությունում՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 4, 2-րդ հարկ հասցեում, 2014. նոյեմբերի 28-ին, ժամը 14^{00}-ին:

Գնման առարկա է հանդիսանում «Պաշտոնական տեղեկագիր» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար՝ համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերումը:

«Պաշտոնական տեղեկագիր» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար՝ համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի (որը կազմված է՝ 19 չափաբաժնից) տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է հրավերի (ծանուցման) N 1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են՝ իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը (Հավելված N 5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկը (Հավելված N 5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

գ. եթե մասնակցի կողմից ներկայացվող գնման առարկայի տեխնիկական բնութագիրը տարբերվում է հրավերում ներկայացված տեխնիկական բնութագրից (N 1 հավելված), ապա անհրաժեշտ է տրամադրել նաև ներկայացվող համարժեք գնման առարկայի տեխնիկական բնութագիրը:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում եմ կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

«Պաշտոնական տեղեկագիր» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրոնային փոստի հասցեն է՝ pt@arlis.am:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, ՀՀ նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ կետի 7-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով ՀՀ նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Առդիր՝ 13 թերթ:

ՏՆՕՐԵՆ Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված 5
«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8» ծածկագրով
ընթացակարգի հրավերի
N «ՊՏ-ՇՀԱՊՁԲ - 11/8-Ա» ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ

----------ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

----------ի կողմի N ----------
Պատվիրատուի անվանումը

ծածկագրով հայտարարված ընթացակարգին և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

----------ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

----------ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

----------ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

----------:
Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

---------- ----------
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

«---------» ---------- 2014թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 5.1
«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8» ծածկագրով
ընթացակարգի հրավերի
N «ՊՏ-ՇՀԱՊՁԲ - 11/8-Ա» ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Գ ն ի ա ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված N «----------» ծածկագրով հրավերը (ծանուցումը)՝ այդ թվում պայմանագրի նախագիծը, ----------մասնակցի անունը (անվանումը)----------նս առաջարկում է պայմանագիրը կատարել համաձայն հետևյալ գների՝

ՀՀ դրամ

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Չ/Մ	Քանակ	Արժեք* (Մեկ միավորի գնի մասով)	ԱԱՀ** (Մեկ միավորի գնի մասով)	Մեկ միավորի առաջարկված գինը /տառերով և թվերով/	Առաջարկված ընդհանուր /չափաբաժնի/ գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7=5+6*	*8=7X4*

**5-րդ սյունակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:*
***Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 6-րդ սյունակում: Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող չէ, ապա 6-րդ սյունակը չի լրացվում կամ լրացվում է զրո:*

---------- Մասնակցի (ղեկավարի) պաշտոնը, անունը, ազգանունը ----------
---

--------(ստորագրությունը)---------

Կ.Տ.

ամսաթիվը ամիսը,
2014թ

ՆԱԽԱԳԻԾ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՎԱՌԵԼԻՔԻ ԳՆՄԱՆ
N «ՊՏ-ՇՀԱՊՁԲ - 11/8-Ա»

ք. Երևան «-----» ---------- 2-----թ.

<_____> -ն, ի դեմս _____յանի, որը գործում է << >> հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և <<_____>> -ն, ի դեմս տնօրեն _____յանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. Պայմանագրի առարկան

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված վառելիք /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/։

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին;

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան;

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պ այմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պ ահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չ ընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը։

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը։

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են ---- օրից ավելի,

3.1.8 Ջնջել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին։

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները։

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պ այմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը։

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից։

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները։

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով։

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը։

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները։

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը։

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պ այմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում։

3.4.2 Սույն պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում։

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում։

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք։

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր։

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պ այմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը։

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը։

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը։

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը։

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները։

3.4.11 Պայմանագրի կատարման (կանխավճարի) ա պահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին։

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ _____ (_____) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, եթե կազմակերպությունը նմանատիպ հարկ վճարող է։

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը։

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը։

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով։ Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից։ Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2015թ. դեկտեմբերի 25-ը։

5. Ապրանքի որակը

Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին։

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում։

6.2 Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից ___ աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության ----- .օրինակ /Հավելված N 4/։

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից ____օրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը։

6.4 Ապրանքը Գնորդի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից։

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար։

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով։

7.3 Պ այմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ։

7.4 Պ այմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով։

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով։

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով։

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց։

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել։ Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը։ Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին։

9. Այլ պայմաններ

9.1 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար։ Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով։

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը։

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության։ Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության։

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

** Եթե գործակալության միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

1) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխությունն իրականացվում է Գնորդի համաձայնությամբ.

2) Վաճառողն է պատասխանատվություն կրում գործակալի պարտավորությունների համար:

9.5 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.7 Պ այմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) Պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

9.8 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.9 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.10 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

*<u>**Սույն կետը կարող է նախատեսվել պայմանագրի նախագծով, եթե կիրառելի է:</u>*

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
---	---
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 1
«___» _____ 2014թ.
կնքված
N ՊS-*ՇՀԱՊՁԲ-11/8-Ա*
գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

NN	Անվանում	Քանակ
1.	Քարթրիջ HP05A Օրիգինալ, կամ համարժեք	65
2.	Քարթրիջ HP12A Օրիգինալ, կամ համարժեք	10
3.	Քարթրիջ CANON EP27 Օրիգինալ, կամ համարժեք	4
4.	Քարթրիջ Օրիգինալ FOR T CANON, կամ համարժեք	6
5.	KYOCERA TK - 675 Տոներ Օրիգինալ, կամ համարժեք	7
6.	Քարթրիջ Xerox 3210 Օրիգինալ, կամ համարժեք	7
7.	Քարթրիջ HP 80A Օրիգինալ, կամ համարժեք	30
8.	KONICA MINOLTA bizhub - 211 - Տոներ Օրիգինալ, կամ համարժեք	7
9.	Սկավառակ DVD R 16x 4,7 GB thermal printable (սպիտակ, փայլուն)	300
10.	Ֆլեշ 8 GB (Verbatim), կամ համարժեք	10
11.	Արտաքին կոշտ սկավառակ 1TB USB 3 2.5”	2
12.	Արտաքին կոշտ սկավառակ 2TB USB 3 3.5” արտաքին սնուցման բլոկով	1
13.	Սկավառակակիր DVD-RW SATA internal for desktop	1
14. *	"HP Proliant DL120 G7" սերվերի հովհար 519711-001	1
15. *	"HP Proliant DL120 G7" սերվերի "INTEL XEON E3-1240 QUAD CORE 3.3GHZ" պրոցեսորի հավաքածու 641914-L21 (պարունակում է՝ 1 պրոցեսոր և 1 ռադիատոր)	1
16. *	"HP Proliant DL120 G7" սերվերի "HP 8GB Dual Rank x8 PC3L-10600E (DDR3-1333) Unbuffered CAS-9 Low Voltage Memory Kit" հիշողություն 647909-B21	4
17.	USB Ստեղնաշար սև գույնի	2
18.	TEAC C-55 ջերմային տպիչի գունավոր թմբուկ (color ribbon)	2
19.	TEAC C-55 ջերմային տպիչի փոխանցիչ թմբուկ (transfer ribbon)	2

Ծանոթություն՝

* <<Պաշտոնական տեղեկագիր>> փակ բաժնետիրական ընկերության կողմից շահագործվում է "HP Proliant DL120 G7" սերվերը:

Տեխնիկական բնութագիրը կազմելիս հաշվի է առնվել <<Պաշտոնական տեղեկագիր>> փակ բաժնետիրական ընկերության գործունեության առանձնահատկությունները:

Ապրանքները պետք է լինեն չօգտագործված:

ԳՆՈՐԴ **ՎԱՃԱՌՈՂ**

Հավելված 2
«___» _____ 2014թ.
կնքված
N ՊՏ-*ՇՀԱՊՁԲ-11/8-Ա*
գնման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Չ/մ	Գնման ժամանակացույց* Քանակն ըստ եռամսյակների				Ընդհանուր քանակը	Միավորի գինը /ՀՀ դրամ/	Գումարը /ՀՀ դրամ/
			I	II	III	IV			
1	2	3	4	5	6	7	8	9	10
1.	Քարթրիջ HP05A Օրիգինալ, կամ համարժեք	հատ					65		
2.	Քարթրիջ HP12A Օրիգինալ, կամ համարժեք	հատ					10		
3.	Քարթրիջ CANON EP27 Օրիգինալ, կամ համարժեք	հատ					4		
4.	Քարթրիջ Օրիգինալ FOR T CANON, կամ համարժեք	հատ					6		
5.	KYOCERA TK - 675 Տոներ Օրիգինալ, կամ համարժեք	հատ					7		
6.	Քարթրիջ Xerox 3210 Օրիգինալ, կամ համարժեք	հատ					7		
7.	Քարթրիջ HP 80A Օրիգինալ, կամ համարժեք	հատ					30		
8.	KONICA MINOLTA bizhub - 211 - Տոներ Օրիգինալ, կամ համարժեք	հատ					7		
9.	Սկավառակ DVD R 16x 4,7 GB thermal printable (սպիտակ, փայլուն)	հատ					300		
10.	Ֆլեշ 8 GB (Verbatim), կամ համարժեք	հատ					10		
11.	Արտաքին կոշտ սկավառակ 1TB USB 3 2.5”	հատ					2		
12.	Արտաքին կոշտ սկավառակ 2TB USB 3 3.5” արտաքին սնուցման բլոկով	հատ					1		
13.	Սկավառակակիր DVD-RW SATA internal for desktop	հատ					1		
14.*	"HP Proliant DL120 G7" սերվերի հովհար 519711-001	հատ					1		
15.*	"HP Proliant DL120 G7" սերվերի "INTEL XEON E3-1240 QUAD CORE 3.3GHZ" պրոցեսորի հավաքածու 641914-L21 (պարունակում է՝ 1 պրոցեսոր և 1 ռադիատոր)	հատ					1		
16.*	"HP Proliant DL120 G7" սերվերի "HP 8GB Dual Rank x8 PC3L-10600E (DDR3-1333) Unbuffered CAS-9 Low Voltage Memory Kit" հիշողություն 647909-B21	հատ					4		
17.	USB Ստեղնաշար սև գույնի	հատ					2		
18.	TEAC C-55 ջերմային տպիչի գունավոր թմբուկ (color ribbon)	հատ					2		
19.	TEAC C-55 ջերմային տպիչի փոխանցիչ թմբուկ (transfer ribbon)	հատ					2		

Ծանոթություն՝

Գնման (ոչ աճողական) ժամանակացույցը համապատասխանեցվելու է 2015թ.-ի ՀՀ իրավական ակտերի ամսական հրապարակումներին համապատասխան:

ԳՆՈՐԴ

(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
«___» _____ 2014թ.
կնքված
N ՊՏ-*ՇՀԱՊՁԲ-11/8-Ա*
գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(հազ. դրամ)

N ը/կ	ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Նախատեսվում է ֆինանսավորել 2015թ. կազմակերպության միջոցների հաշվին, ընդ որում՝				Ընդամենը տարեկան
		I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*
1.	Քարթրիջ HP05A Օրիգինալ, կամ համարժեք	100%	100%	100%	100%	100%
2.	Քարթրիջ HP12A Օրիգինալ, կամ համարժեք	100%	100%	100%	100%	100%
3.	Քարթրիջ CANON EP27 Օրիգինալ, կամ համարժեք	100%	100%	100%	100%	100%
4.	Քարթրիջ Օրիգինալ FOR T CANON, կամ համարժեք	100%	100%	100%	100%	100%
5.	KYOCERA TK - 675 Տոներ Օրիգինալ, կամ համարժեք	100%	100%	100%	100%	100%
6.	Քարթրիջ Xerox 3210 Օրիգինալ, կամ համարժեք	100%	100%	100%	100%	100%
7.	Քարթրիջ HP 80A Օրիգինալ, կամ համարժեք	100%	100%	100%	100%	100%
8.	KONICA MINOLTA bizhub - 211 - Տոներ Օրիգինալ, կամ համարժեք	100%	100%	100%	100%	100%
9.	Սկավառակ DVD R 16x 4,7 GB thermal printable (սպիտակ, փայլուն)	100%	100%	100%	100%	100%
10.	Ֆլեշ 8 GB (Verbatim), կամ համարժեք	100%	100%	100%	100%	100%
11.	Արտաքին կոշտ սկավառակ 1TB USB 3 2.5”	100%	100%	100%	100%	100%
12.	Արտաքին կոշտ սկավառակ 2TB USB 3 3.5” արտաքին սնուցման բլոկով	100%	100%	100%	100%	100%
13.	Սկավառակակիր DVD-RW SATA internal for desktop	100%	100%	100%	100%	100%
14.*	"HP Proliant DL120 G7" սերվերի հովհար 519711-001	100%	100%	100%	100%	100%
15.*	"HP Proliant DL120 G7" սերվերի "INTEL XEON E3-1240 QUAD CORE 3.3GHZ" պրոցեսորի հավաքածու 641914-L21 (պարունակում է՝ 1 պրոցեսոր և 1 ռադիատոր)	100%	100%	100%	100%	100%
16.*	"HP Proliant DL120 G7" սերվերի "HP 8GB Dual Rank x8 PC3L-10600E (DDR3-1333) Unbuffered CAS-9 Low Voltage Memory Kit" հիշողություն 647909-B21	100%	100%	100%	100%	100%
17.	USB Ստեղնաշար սև գույնի	100%	100%	100%	100%	100%
18.	TEAC C-55 ջերմային տպիչի գունավոր թմբուկ (color ribbon)	100%	100%	100%	100%	100%
19.	TEAC C-55 ջերմային տպիչի փոխանցիչ թմբուկ (transfer ribbon)	100%	100%	100%	100%	100%
	Ընդամենը					100%

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ԳՆՈՐԴ

(ստորագրություն)

ՎԱՃԱՌՈՂ

(ստորագրություն)

Հավելված 4
«___» _____ 2014թ. կնքված
N ՊՏ-*ՇՀԱՊՁԲ-11/8-Ա*
գնման պայմանագրի

Գնորդ	Վաճառող
_____	_____
_____	_____
հասցե_____	հասցե_____
հհ_____	հհ_____
հվհհ_____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_ _» «_____» 20 թ.

Պայմանագրի անվանումը՝
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «_ _» «_____ » 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____

Գնորդը, ի դեմս ----------և Մատակարարն՝ի դեմս ----------, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Վաճառողը «_ _» «____» 20 թ.–ից «_ » «___ » 20 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ մատակարարումները

Գնման առարկայի անվանումը	*Գնման առարկայի քանակական ցուցանիշը*	*Աշխատանքների կատարման ժամկետը*	*Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)*	*Վճարման ժամկետը (ըստ ժամանակա-ցույցի)*
Ընդամենը				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____ (ստորագրություն)	_____ (ստորագրություն)
ազգանուն _____	ազգանուն _____
Կ Տ	Կ Տ

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N «ՊՏ-ՇՀԱՊՁԲ - 11/8-Ա»

ք. Երևան <<_____>>_____20 թ.

<<Մասնակցի անվանումը>>, ի դեմս Ընկերության տնօրեն՝ <<Ընկերության տնօրենի անուն ազգանունը>>, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է <<Պատվիրատուի անվանումը>> (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ վառելիքի ձեռքբերման N «ՊՏ-ՇՀԱՊՁԲ - 11/8-Ա» ծածկագրով շրջանակային համաձայնագրին, պետք է ներկայացնի պայմանագրի կատարման ապահովում և սույն ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով Ընկերության ստանձնած պարտավորությունների պատշաճ, ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 Պատվիրատուի կողմից կազմակերպված Վառելիքի ձեռքբերման N «ՊՏ-ՇՀԱՊՁԲ - 11/8-Ա» գնման պայմանագրից բխող պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումից խուսափելու կամ հրաժարվելու, ինչպես նաև գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ ----------թվերով---------- (----------տառերով----------) ՀՀ դրամի չափով:

1.1.2 Պատվիրատուն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որը Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում Պատվիրատուն, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող <<Մասնակցի բանկի անվանումը>> կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով <<Մասնակցի անվանումը>>, հանձնարարում է <<Մասնակցի բանկի անվանումը>>-ին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում <<Պատվիրատուի անվանումը>> առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

2. Այլ պայմաններ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների ողջ ծավալով կատարմանը հաջորդող հինգերորդ օրը ներառյալ:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները

<<Մասնակցի անվանումը>>

<<Մասնակցի հասցեն>>

<<Մասնակցի բանկի անվանումը>>

Հ/Հ

ՀՎՀՀ

տնօրեն՝ ----------

(ստորագրություն)

գլխ. հաշվապահ՝ ----------

(ստորագրություն)

Կ.Տ